

**ՀՀ ԳԱԱ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԿԵՍՈՅԱՆ ՄԻՐԱՆՈՒՇ ԷԴՈՒԱՐԴԻ**

**ՆԵՐԱԿԱՅՈՒՄԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

**Ժ. 02.01 - «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ  
ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ-2024**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

**Ավետիսյան Յուրիկ Սրապիոնի**  
բանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

**Խաչատրյան Գուրգեն Կիպրոնի**  
բանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր

**Սարգսյան Մերի Արթուրի**  
բանասիրական գիտությունների թեկնածու,  
դոցենտ

Առաջատար կազմակերպություն՝

**Խ. Աբովյանի անվան հայկական  
պետական մանկավարժական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024 թ. հոկտեմբերի 30-ին՝ ժամը 15<sup>00</sup>-ին, ԲԿԳԿ-ի՝ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող Լեզվաբանության 019 խորհրդի նիստում (Երևան, 0015, Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թվականի սեպտեմբերի 24-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ *Սիմոնյան* **Ն. Սիմոնյան**  
բան. գիտ. թեկնածու, դոցենտ

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** Ներակայումը, չնայած լեզվում ունեցած իր մեծ դերին, հայ լեզվաբանության մեջ քիչ է ուսումնասիրվել: Մանրամասն քննության են ենթարկվել պայմանական ասույթները՝ որպես ներակայող ասույթների տարատեսակ, դրանց գործաբանական իմաստները, ներկայացվել են ներակայման լեզվական հարաբերակիցները՝ շարկապներն ու կապերը, բառակապակցությունները, շարահյուսական դարձվածները, անշաղկապ բարդ ստորադասական նախադասությունները, պարզ նախադասությունները, երկու և ավելի նախադասությունների զուգակցումները, կատարվել է պայմանական իմաստի արտահայտման միջոցների զուգադրական քննություն մի կողմից՝ բնագրի և միջլեզվական թարգմանությունների, մյուս կողմից՝ բնագրի և ներլեզվական թարգմանությունների միջև<sup>1</sup>: Այսինքն՝ կատարվել է «եթե ... ապա» ասույթի տրամաբանական խորքային քննություն: Վ. Բաղդասարյանն էլ քննել է ներակայի խնդիրը լեզվում տրամաբանական-մեթոդաբանական տեսանկյունից, ներկայացրել է ներակայի դրսևորման որոշ միջոցներ և անդրադարձել ներակայմանն առնչվող տրամաբանական մի շարք հարցերի: Նա ներիմաստ պարունակող միջոցների շարքում նշում է նաև հապավումները<sup>2</sup>: Դա նախանշում է ներակայման ուսումնասիրության անհրաժեշտությունը նաև բառակազմության մեջ:

Տեսականորեն կատարվել է լեզվական արտահայտման երկու բևեռների՝ ներակայության և հավելորդայնության զուգադրական քննություն՝ պայմանավորված նախադասության և տեքստի առանձնահատկություններով<sup>3</sup>: Ներակայումը լայն առումով դիտարկել է Ս. Աբրահամյանը՝ առանձնացնելով ներակայման որոշ դրսևորումներ լեզվի տարբեր մակարդակներում, քննելով այն նաև բառակազմության մեջ և այդպիսով նախանշելով հարցի հետևողական և խոր ուսումնասիրության կարևորությունը<sup>4</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս Բրուտյան Լ. Գ., Ներակայման տեսության հիմունքները, Երևան: «Հայաստան» հրատ., 2002, 169 էջ, նույնի՝ Իմպլիկացիայի հասկացությունը տրամաբանության և լեզվաբանության մեջ // Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1990, № 12 (41), էջ 41-54, նույնի՝ Բարդ ասույթների գործաբանական իմաստների վերլուծության շուրջ // Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1996, № 2 (89), էջ 169-176, նույնի՝ Պարզ նախադասությունները որպես ներակայման հարաբերակիցներ // Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1997, № 3(93), էջ 57-60, նույնի՝ Պայմանական ասույթները թարգմանություններում // Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1996, № 3 (90), էջ 13-22, Брутян Л. Г., Анализ языковых выражений импликации, Ереван: Изд-во АОУ, 1992, 379 էջ:

<sup>2</sup> Տե՛ս Багдасарян В. X., Проблема имплицитного, Ереван: Изд-во АН Армянской ССР, 1983, 138 էջ:

<sup>3</sup> Տե՛ս Աբրահամյան Ա. Ս., Ներակայություն և հավելորդայնություն. լեզվական արտահայտման երկու բևեռները // Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն, Երևան, 2015, № 2 (17), էջ 3-13:

<sup>4</sup> Տե՛ս Աբրահամյան Ա. Գ., Ներակայումը և հայոց լեզվի զարգացման մի քանի հարցեր // Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2002, № 1 (605), էջ 3-16:

Հայ լեզվաբանության մեջ կան ներիմաստի այլ ուսումնասիրություններ ևս, որոնք կատարվել են անգլերենի և ֆրանսերենի նյութերի հիման վրա<sup>5</sup>:

Սույն աշխատանքի արդիականությունը պայմանավորված է գործնականում արդի հայերենի տարբեր մակարդակներում և խոսքում ներիմաստի վերհանման, յուրաքանչյուր մակարդակում դրա դրսևորման յուրահատկությունների և, տարբեր հանգամանքներով ու միտումներով պայմանավորված, միտքն անուղղակիորեն ձևակերպելու, առարկայական և գնահատողական տեղեկույթն անուղղակիորեն հաղորդելու միջոցների քննության անհրաժեշտությամբ:

**Հետազոտության նպատակն ու խնդիրները:** Մեր նպատակն է ուսումնասիրել ներակայումը արդի հայերենի բոլոր մակարդակներում ու խոսքում և պարզել, թե ինչ դրսևորումներ ու յուրահատկություններ ունի դրանցից յուրաքանչյուրում:

Ուսումնասիրության նպատակով պայմանավորված՝ առաջ են գալիս հետևյալ խնդիրները.

1. դիտարկել բառակազմական այն կառույցները, որոնց կազմությանը մասնակցում է ներակայումը, և պարզել, թե ինչ բաղադրիչների իմաստներ կարող են ներակայվել տարբեր կառույցներում,

2. քննել բառային միավորներով փոխանցվող ներակա տեղեկույթը,

3. վեր հանել ձևաբանական կարգերի այն նշանակությունները, որոնք սովյալ կիրառության մեջ ընկալվում են ներակայորեն,

4. ուսումնասիրել ներակայման գործառույթները և դերը տարբեր բառակապակցությունների կազմության մեջ և նախադասության կառուցվածքում,

5. դիտարկել ներիմաստի տեսակները, վեր հանել չկանխամտածված ներիմաստի առաջացման պատճառները և այն հանգամանքներն ու միտումները, որոնցով պայմանավորված է ներիմաստի կանխամտածված ներդրումը խոսքում,

6. քննել խոսողի կամ հեղինակի վերաբերմունքի ներակա արտահայտման միջոցները,

7. ընդհանուր գծերով անդրադառնալ ներակայման ընդգրկմանը գործառական տարբեր ոճերում:

**Աշխատանքի մեթոդաբանությունը:** Ուսումնասիրությունը կատարվել է մի քանի մեթոդների համադրմամբ: Կիրառվել են վերլուծական, համադրական և նկարագրական մեթոդները: Տեսական դրույթները հիմնավորվել են բառարաններից, առօրյա խոսքից, գեղարվեստական գրականությունից,

---

<sup>5</sup> Տե՛ս Մանուկյան Ն. Գ., Ներիմաստի դրսևորումը երկխոսության մեջ (անգլերեն նյութի հիման վրա): Ատենախոսություն բան. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման, Երևան, 2014, 165 էջ, Ջաքարյան Վ. Ա., Ներակա իմաստի դրսևորման առանձնահատկությունները քաղաքական խոսույթում (ժամանակակից ֆրանսիացի քաղաքական գործիչների ելույթների նյութի վրա): Ատենախոսություն բան. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման, Երևան, 2011, 159 էջ:

մամուլից, սակավ դեպքերում՝ նաև գիտական ու պաշտոնական ոճերի տեքստերից բերված օրինակներով:

**Ատենախոսության գիտական նորույթը:** Հայ իրականության մեջ ներակայմանը եղել են միայն մասնակի և շատ քիչ անդրադարձներ: Կարելի է ասել՝ այս աշխատանքը առաջին փորձն է՝ դիտարկելու ներակայումն արդի հայերենում լայն ընդգրկմամբ՝ քննելով այն և՛ լեզվի տարբեր մակարդակներում, և՛ խոսքում:

Մյուս կողմից՝ աշխատանքում լեզվական տարբեր կառույցներ ու միավորներ ուսումնասիրվել են նոր դիտանկյունից, մասնավորապես՝ բազմիցս լայնորեն ուսումնասիրված այնպիսի միավորներ, ինչպիսիք են պատկերավորման-արտահայտչական միջոցները, նորաբանությունները, հասարակաբանությունները և այլն, քննվել են նոր լույսի ներքո, այն է՝ որպես ներիմաստի արտահայտման միջոցներ:

**Ատենախոսության գործնական նշանակությունը:** Կատարված ուսումնասիրությունը կարող է ուղղորդիչ դեր ունենալ լեզվական իմաստների ճիշտ ըմբռնման հարցում՝ հուշելով հաշվի առնել արտաքին կառուցվածքի տակ թաքնված իմաստներն ու միտումները: Այն կարող է իր ներդրումն ունենալ հարցի հետագա ուսումնասիրություններում:

**Ատենախոսության կառուցվածքը և համառոտ բովանդակությունը:** Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և համառոտագրություններից:

Ատենախոսության ընդհանուր ծավալը 143 էջ է:

**Ներածության** մեջ քննվել է ներակայման հասկացությունը, անդրադարձ է կատարվել ներակայման և նրան առնչակից հասկացությունների սահմանազատմանը, ինչպիսիք են ենթատեքստը, կանխենթադրույթները և ներակայույթը (իմպլիկատուրա):

Լեզվաբանության մեջ ընդհանուր առմամբ ներակայումը դիտվում է որպես արտահայտության և բովանդակության պլանների անհամաչափության դրսևորում: Այն ուսումնասիրվել է տարբեր տեսանկյուններից: Մի կողմից՝ դիտարկվել է որպես ենթադրվող իմաստ՝ սկսած ստեղծագործության լրացուցիչ իմաստային պլանից և ավարտած տեքստի միավորների հարաբերությունից բխող ենթադրվող իմաստով, մյուս կողմից՝ քննվել են բառային միավորների իմաստաբանության մեջ պարունակվող ներակա տարրերը, որոնք հանգեցնում են բառի իմաստային կառույցի փոփոխության<sup>6</sup>: Պայմանավորված տարբեր մոտեցումներով՝ տարբեր են նաև ներակայման սահմանումները: Ամենից պարզ և ընդհանուր սահմանմամբ՝ ներակա են

---

<sup>6</sup> Ст'ю Умерова М. В., Импликация в семантической структуре текста, <https://studylib.ru/doc/286807/implikaciya-v-semanticheskoy-strukture-teksta> (մուտք՝ 15.08.2022), էջ 1:

համարվում այն իմաստները, որոնք ուղղակիորեն արտահայտված չեն, բայց հաղորդակցության մասնակիցները դրանք բխեցնում են արտակայորեն արտահայտվածի<sup>7</sup>: Կամ. «Այն բովանդակությունը, որն ուղղակիորեն մարմնավորված չէ ասույթը կազմող լեզվական միավորների բառային և քերականական սովորական նշանակություններում, բայց բխում է կամ կարող է բխեցվել այդ ասույթից նրա ընկալման ժամանակ, մենք կանվանենք ասույթի ներակա բովանդակություն»<sup>8</sup>, ներակա է համարվում «ասույթի իմաստային բաղադրիչը, որը տվյալ ասույթում չունի հատուկ ձևային արտահայտություն, բայց առկա է նրա իմաստային կառուցվածքում»<sup>9</sup> և այլն: Ի. Վ. Առնոլդն էլ առաջ է քաշում տեքստային ներակայման հասկացությունը՝ սահմանելով այն որպես լրացուցիչ ենթադրվող իմաստ, որը բխում է տեքստը կազմող միավորների հարաբերակցությունից, բայց դրանցով բառացիորեն արտահայտված չէ, ընդ որում այն քննվում է ոչ թե առանձին նախադասության, այլ տեքստի որոշակի հատվածի հիման վրա՝ անկախ նրանից, թե քանի նախադասությունից է այդ հատվածը կազմված<sup>10</sup>:

Անկախ այն բանից, թե ինչ տեսանկյունից է քննվում ներակայումը, միանշանակ է այն, որ ներակա իմաստը չունի ուղղակի ձևային արտահայտություն, այլ արտահայտվում է անուղղակիորեն, միջնորդավորված ձևով: Քննելով ներակայումը՝ ներակա ենք համարում «այն տեղեկույթը, որի ընկալման համար լսողից պահանջվում են ջանքեր, և որը չի հանգում լեզվական միավորների նշանակությունների համադրմանը»<sup>11</sup>: Քանի որ այն «ասվածի (գրվածի) և լսածի (կարդացածի) անհամապատասխանությունն է, այդ իսկ պատճառով հասցեատիրոջ գործունեությունը ներառում է ոչ միայն նշանների վերծանումը, այլև բազմաթիվ եզրակացություններ, որոնք նա անում է ենթատեքստի և սեփական ֆոնային գիտելիքների հիման վրա»<sup>12</sup>:

<sup>7</sup> St'u, orինակ, Никитин М. В., Курс лингвистической семантики: Учебное пособие. – 2-е изд., доп. и испр., СПб.: Изд-во РГПУ им. А. И. Герцена, 2007, էջ 533, Багдасарян В. Х., նշվ աշխ., էջ 5, Архипова Е. В., Имплицитные средства выражения речевого акта согласия/несогласия в английском языке // ВЕСНИК МДПУ імя І. П. Шамякіна. Філалогія, էջ 43, <https://cyberleninka.ru/article/n/implitsitnye-sredstva-vyrazheniya-rechevogo-akta-soglasiya-nesoglasiya-v-angliyskom-yazyke/viewer> (մուտք՝ 20.10.2023), Ситдикова Ф. Б., Имплицитный смысл высказывания и его передача в переводе с татарского языка на русский: монография, Москва: «РУСАЙНС», 2020, էջ 7 և այլն:

<sup>8</sup> Долинин К. А., Имплицитное содержание высказывания // Вопросы языкознания, 1983, № 6, с. 37.

<sup>9</sup> Змеёва Т. Е., Оценочная модальность печатной рекламы предметов роскоши (на материале французского языка) // Филологические науки. Вопросы теории и практики, Тамбов: Изд-во «Грамота», 2012, № 1 (12), с. 70.

<sup>10</sup> St'u Арнольд И. В., Импликация как прием построения текста и предмет филологического изучения // Вопросы языкознания, Москва: Изд-во академии наук СССР, 1982, № 4, էջ 84:

<sup>11</sup> «Имплицитность в языке и речи» / отв. ред. Е. Г. Борисева, Ю. С. Мартемьянов, Москва: «Языки русской культуры», 1999, с. 10.

<sup>12</sup> Приходько А. И., Имплицитность как способ скрытого оценивания, <https://cyberleninka.ru/article/n/implitsitnost-kak-sposob-skrytogo-otsenivaniya/viewer> (մուտք՝ 20.05.2023), с. 48.

# ԳԼՈՒԽ 1. ՆԵՐԱԿԱՅՈՒՄԸ ԲԱՌԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

## 1.1. Բառակազմություն

Ներակայումը հանդես է գալիս լեզվի տարբեր մակարդակներում: Քննելով ներակայումը բառային մակարդակում՝ այն դիտարկել ենք նախ բառակազմության, ապա՝ իմաստաբանության մեջ:

Ներակայումն իր հատուկ տեղն ունի բառակազմության մեջ, քանի որ բաղադրյալ բառերի կազմության ժամանակ ոչ բոլոր բաղադրիչներն են արտակայորեն արտահայտվում տվյալ կառուցում, սակայն դրանց նշանակությունները հաղորդվում են. ներակա և արտակա իմաստները սովորաբար հանդես են գալիս միասնաբար, արտակայորեն արտահայտված իմաստները հիմք են դառնում ներակայված իմաստների ընկալման համար:

Այս բաժնում քննվել են բառակազմական տարբեր կառույցներ, որոնցում հանդես է գալիս ներակայումը, առանձնաբար ներկայացվել է, թե ինչ բաղադրիչների իմաստներ կարող են ներակայվել՝ արմատ, ածանց կամ երկուսը միաժամանակ, օրինակ՝ *ապահովագրապետը* նշանակում է «ապահովագրության տեր» (ՆԲ), *ամերիկուհի*՝ «ամերիկացի կին», *թղթատեղան*՝ «թղթախաղի սեղան», *ժամանակապահպան*՝ «ժամանակագրական տախտակ» (ԱՀԲԲ) և այլն: Այս առումով նաև զուգահեռներ են անցկացվել արևելահայերենի և արևմտահայերենի համապատասխան իրողությունների միջև:

Պետք է նշել նաև, որ ներակայման միջոցով լեզվական մի մակարդակի՝ շարահյուսական մակարդակի միավորը վերածվում է մեկ այլ՝ բառային մակարդակի միավորի, երբ բազմաբաղադրիչ բառակապակցությունների նշանակությունն արտահայտվում է մեկ բառով տարբեր բաղադրիչների ներակայմամբ, օրինակ՝ *աղացանիվ* նշանակում է «աղացաքարը կամ աղացագլանները պտտեցնող անիվ» (ԱՀԲԲ):

Առանձնաբար անդրադարձ է կատարվել նաև հապավումներին, որոնց թվում նաև՝ կրկնահապավումներին կամ գեղջումով հապավումներին, որոնցում ներակայումն ունի յուրօրինակ դրսևորում, օրինակ՝ ՀՀ – Հայաստանի Հանրապետություն, *ֆինաշխարհ* – ֆինանսական բնագավառի աշխատող (ԱՀԲԲ), և անվանումներին, որոնցում ներակայումը դրսևորման շատ ավելի բարձր աստիճան ունի, օրինակ՝ *զանգակածաղիկ* – զանգակազգիների ընտանիքին պատկանող՝ մուգ կապտագույն կամ մանուշակագույն զանգակաձև ծաղիկներով խոտաբույս (ԱՀԲԲ):

## 1.2. Իմաստաբանություն

Բառային մակարդակում ներակայման քննությունը ենթադրում է նաև բառային միավորներով փոխանցվող ներակա տեղեկույթի դիտարկում: Ամեն բառ ունի իր ուղղակի, հիմնական իմաստը, բայց իրացվելով ասույթում կամ առհասարակ խոսքում՝ կարող է արտահայտել այնպիսի իմաստներ, որոնք չեն մտնում իր հիմնական իմաստային կազմի մեջ: Այդպիսի իմաստներն ընդունված է անվանել ներակա: Այս ենթազվխում քննվել են այն դեպքերը, երբ բառում ներիմաստ է ծագում: Այսպես՝ բառային միավորներով փոխանցվող ներակա տեղեկույթի աղբյուր է դրանց կիրառությունը փոխաբերական իմաստով, այսինքն՝ մի բառը գործածվում է մեկ այլ բառի իմաստով և նրա փոխարեն, ասել է թե՛ գործածված բառը թաքցնում է մեկ այլ իմաստ, ասում ենք մի բան, բայց նկատի ունենք մեկ այլ բան: Ընդ որում ներիմաստն ավելի լայն ընդգրկում ունի ծավալուն փոխաբերություններում, որոնք հնարավորություն են տալիս նաև որոշակիորեն քողարկելու ասելիքը, օրինակ. «Գուցե խաղաղությամբ հանգեցնենք մեր տան ներսում ծագած կրակը» (ՄԽ, էջ 73), ասել է թե՛ «Գուցե խաղաղությամբ վերջ դնենք ներքին ապստամբությանը», այսինքն՝ «մեր տան ներսում ծագած կրակը» արտահայտությամբ Տեր Ավետիսն անուղղակիորեն նկատի ուներ երկրում ծագած ներքին ապստամբությունը:

Ներիմաստ է ծագում նաև, երբ բառը կիրառվում է փոխանվանաբար, եզակին՝ հոգնակիի, մասնավորը՝ ընդհանուրի նշանակությամբ և հակառակը:

Ուշագրավ է նաև այն դեպքը, երբ դրական իմաստով բառը կամ արտահայտությունը գործածվում է միանգամայն հակառակ նշանակությամբ (հեզնանք), որը և տվյալ լեզվական միավորով հաղորդվող ներիմաստն է, օրինակ. «Ահա այդպիսի նախասամանորյա **«նվեր»** ստացան ուկրաինացիներն իրենց ընտրած նախագահի կողմից» («Հրապարակ», 2022, № 187 (3414), էջ 5. այսինքն՝ «պատիժ», քանի որ նկատի են առնվում Ուկրաինայում հոսանքի, ջեռուցման ու ջրամատակարարման անջատումները):

Այնուհետև որպես ներակա տեղեկույթ հաղորդող միավորներ քննվել են նախ՝ **դարձվածքները**, որոնց բաղադրիչները վերահիմաստավորվում են և ձեռք բերում նոր իմաստ, այսինքն՝ արտաքին ձևավորումը մի պայմանական կառույց է, որի տակ թաքնված է բոլորովին այլ նշանակություն, ապա՝ փոխաբերության և առհասարակ այլաբերության հիմքի վրա կառուցված **թևավոր խոսքերը**, **պատկերավոր ասույթները** և **առածները**, որոնք խոսքը դարձնում են ավելի գեղեցիկ ու տպավորիչ, բայց և կատարում են մեկ այլ գործառույթ ևս: Դրանք արտաքուստ կարող են ունենալ լիարժեք լեզվական արտահայտություն,



սակայն խորքային մակարդակում թաքցնում են շատ ավելի խոր իմաստ և հնարավորություն են տալիս խոսողին իր միտքն ուղղակիորեն, բացահայտ արտահայտելու փոխարեն քողարկելու այն մեկ այլ մակերեսային մտածություն արտահայտելով: Բերենք մեկ օրինակ պատկերավոր ասույթներից. «– **Երկար թևեր ունեցող աքլորին խուզում են, Եսայի՛**» (ՄԽ, էջ 63). Եսային վերամբարձ ձևով խոսում էր մեծ գործերի մասին, որոնք այնքան էլ հավանական, իրատեսական չէին թվում Ծատուրին, որն ասվածով ուզում էր արտահայտել այն միտքը, թե «մեծ-մեծ խոսողներին ի վերջո ոչնչացնում են»: Իզուր չէ ասվում, որ լեզուն տրված է մարդուն ոչ միայն նրա համար, որ մտքեր արտահայտի, այլև նրա համար, որ թաքցնի դրանք<sup>13</sup>:

## ԳԼՈՒԽ 2. ՆԵՐԱԿԱՅՈՒՄԸ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Լեզվի քերականական մակարդակում ներակայումը քննվել է մի կողմից՝ ձևաբանական կարգերում, մյուս կողմից՝ շարահյուսական կառույցներում, քանի որ «որքան էլ սպառիչ և լիարժեք թվա որևէ լեզվի քերականական նկարագրությունը, այն, ըստ էության, չի կարող ամբողջական լինել, քանի դեռ նրանում իրենց արտացոլումը չեն գտել լեզվի ոչ բացահայտ կարգերը և թաքնված քերականության մյուս տարրերը»<sup>14</sup>:

### 2.1. Ձևաբանական մակարդակ

Այս ենթագլխում դիտարկվել են այն ձևաբանական միավորները, որոնք, ունենալով իրենց հատուկ նշանակությունները, իրացվելով խոսքում, ձեռք են բերում բոլորովին այլ՝ ներակա նշանակություններ: Հայերենում ներակա իմաստների արտահայտման բազմազանությամբ աչքի է ընկնում հատկապես բայական համակարգը: Ընդհանուր առմամբ առանձնացվել են ձևաբանական կարգերի իմաստային ներակայումների հետևյալ դեպքերը՝

1. Ժամանակային իմաստի ներակայում,
2. Եղանակային իմաստի ներակայում,
3. անդեմ ձևերի կիրառությունը դիմավոր ձևերի նշանակությամբ,
4. դիմային իմաստի ներակայում,
5. թվային իմաստի ներակայում,
6. հոլովական իմաստի ներակայում:

<sup>13</sup> Տե՛ս Багдасарян В. Х., նշվ. աշխ., էջ 56:

<sup>14</sup> Кацнельсон С. Д., Типология языка и речевое мышление, Ленинград: Изд-во «Наука», 1972, с. 82.

## 2.2. Շարահյուսական մակարդակ

Շարահյուսական մակարդակում ներակայումը քննվել է մի կողմից՝ բառակապակցություններում, մյուս կողմից՝ նախադասության կառուցվածքում:

Ներակայումը հնարավորություն է տալիս բազմանդամ բառակապակցությունները ներկայացնելու ավելի սակավաբաղադրիչ բառակապակցություններով, օրինակ՝ *համաժամանակյա աղյուսակներ* – միևնույն ժամանակամիջոցում կատարված **դեպքերի՝ երևույթների** աղյուսակներ (ԱՀԲԲ). տվյալ դեպքում ներակայորեն են արտահայտվում **դեպքեր** կամ **երևույթներ** բառերի իմաստները, և այդպիսով բազմանդամ բառակապակցությունը (համաժամանակյա դեպքերի՝ երևույթների աղյուսակներ) վերածվել է երկանդամ բառակապակցության: Այս առնչությամբ քննվել են *երկանդամ դերբայազուրկ բառակապակցությունները*, որոնց անվանումն իսկ խոսում է դերբայի ոչ անմիջական, անուղղակի արտահայտման և միաժամանակ դրա իմաստի ենթադրման մասին, այսինքն՝ դերբայի իմաստն արտահայտվում է ներակայորեն, օրինակ. «Ձորականը, որ բավական հասակավոր, ջրուտ, բարձրահասակ մի անձնավորություն էր՝ *մրահոգ հայացքը գետնին (հառած)*՝ անցավ իրեն հետևող մի խումբ վանականների միջով և անխոս կանգնեց, անհամբեր սպասելով ինչ-որ մի բանի» (ԴԴ, էջ 7):

Այնուհետև քննվել են բայանունների ու դրանց լրացումների կապակցությունները, օրինակ՝ *փախուստ բանտից, ուղերձ ժողովրդին*, և այն ածականական բառակապակցությունները, որոնց ստորադաս անդամն արտահայտված է ուղղական հոլովով դրված գոյականով, ինչպես՝ **մազերը** սև, **աչքերը** կապույտ: Առաջին տիպի կառույցներում ենթադրվում է թաքնված դերբայական իմաստ, քանի որ, օրինակ, *փախուստ բանտից*, ըստ էության, նշանակում է «փախուստ՝ կատարված բանտից», *ուղերձ ժողովրդին* «ուղերձ՝ ուղղված ժողովրդին»: Այսինքն՝ նման կառույցներում նկատելի է դերբայական իմաստի ոչ բացահայտ՝ ներակա արտահայտում: Երկրորդ տիպի կառույցներում առկա է հոլովական իմաստի ներակայում այն առումով, որ *մազերը սև* նշանակում է *սև մազերով, աչքերը կապույտ՝ կապույտ աչքերով* և այլն, այսինքն՝ ուղղական հոլովը հանդես է գալիս գործիական հոլովի նշանակությամբ («մի բան ունեցող»):

Առավել բազմազան են ներիմաստի դրսևորման միջոցները նախադասության կազմում: Որպես այդպիսին նախ և առաջ քննվել է **բացթողումը**, քանզի նախադասության մեջ կարող են բաց թողնված լինել տարբեր անդամներ, որոնք ընկալվում են ներակայորեն: Բացթողումից՝ որպես ներիմաստի դրսևորման միջոցից, պետք է տարբերակել **քերականական զեղչումը**, որը սովորաբար հանդես է գալիս թերի նախադասություններում և ինքնին չի կարող ներիմաստի արտահայտման միջոց լինել, քանի որ զեղչված է ոչ թե որևէ թաքնված, չարտահայտված, այլ արդեն խոսքում արտահայտված

որևէ իմաստ, և զեղչված անդամն արդեն իսկ գործածված է նախադասության կազմում:

Իբրև որոշակի մտքի ներակայիչ՝ քննվել է նախադասությունն ամբողջությամբ: Ներկայացվել են ներակա ժխտման և ներակա հաստատման արտահայտման միջոցները, դիտարկվել ներիմաստի արտահայտման այլ տարրեր ևս:

Քերականական մակարդակում ներակայման քննության ընթացքում որոշակի զուգահեռներ են անցկացվել նաև արևելահայերենի ու արևմտահայերենի համապատասխան իրողությունների միջև:

### **ԳԼՈՒԽ 3. ՆԵՐԱԿԱՅՈՒՄԸ ՀԱՂՈՐԴԱԳՑԱԿԱՆ-ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ**

#### **3.1. Ներակա իմաստի տեսակները. կանխամտածված և չկանխամտածված ներիմաստներ**

Ներիմաստը լեզվաբանության մեջ քննվել է տարբեր տեսանկյուններից, և, ըստ այս կամ այն չափանիշի, առանձնացվել են ներակա իմաստների որոշակի տեսակներ: Այսպես, ըստ այնմ՝ ներակա իմաստը կապված է կոնկրետ-համատեքստային իմաստի, թե ասույթի լեզվական բովանդակության հետ, առանձնացվում են երկու տիպի ներիմաստներ՝ **կոնկրետ-համատեքստային և ընդհանուր հաղորդակցական**<sup>15</sup>, ըստ հաղորդման միջոցի՝ **լեզվաբանական, ոչ բուն լեզվաբանական և արտալեզվական**<sup>16</sup>, ըստ հաղորդվող տեղեկատվության բնույթի՝ **թելադրական** (диктальный) և **եղանակավորող**<sup>17</sup>, ըստ դրսևորման մակարդակի՝ **համակարգային-լեզվական և խոսքային**<sup>18</sup>: Իսկ Վ. Բաղդասարյանը, ըստ համատեքստի ընդարձակության և բնույթի, առանձնացնում է **ներիմաստ միկրոհամատեքստի հիման վրա**, այսինքն՝ ասույթի շրջանակներում, **ներիմաստ մակրոհամատեքստի հիման վրա**, այսինքն՝ այնպիսի համատեքստի, որը ներառում է տվյալ ասույթի խոսքային միջավայրը՝ ընդհուպ խոսքի տվյալ ամբողջական միավորը (ամբողջ

<sup>15</sup> Տե՛ս Комиссаров В. Н., Современное переводоведение. Учебное пособие, Москва: ЭТС, 2002, էջ 61, Умерова М. В., Импликация в семантической структуре текста, էջ 9:

<sup>16</sup> Տե՛ս Воронушкина О. В., Виды скрытых смыслов и способы их экспликации // Вестник АлтГПА: гуманитарные науки, 2014, № 21, էջ 65-66:

<sup>17</sup> Տե՛ս Лисоченко Л. В., Высказывания с имплицитной семантикой (логический, языковой и прагматический аспекты): монография, Ростов н/Д: Изд-во Рост. ун-та, 1992, էջ 15, Иванкова И. В., Модальный имплицитный смысл в художественном тексте, Тамбов: «Грамота», 2011, № 9 (52), էջ 131:

<sup>18</sup> Տե՛ս Бондарко А. В., Эксплицитность/имплицитность в общей системе категоризации семантики // Семантико-дискурсивные исследования языка: Эксплицитность/имплицитность выражения смыслов, Калининград-Светлогорск, 2006, էջ 24:

նամակը, պատմվածքը և այլն), և **ներիմաստ մետահամատեքստի հիման վրա**, այսինքն՝ այն իրավիճակի, որում իրացվում է խոսքի տվյալ միավորը<sup>19</sup>:

Ներիմաստի տեսակների առանձնացման մեկ այլ չափանիշ է խոսողի կամ հեղինակի նպատակադրման, որոշակի միտումի բացակայությունը կամ առկայությունը, ըստ որի՝ առանձնացվում են **չկանխամտածված** կամ **ոչ միտումնավոր** և **կանխամտածված** կամ **միտումնավոր** ներիմաստներ<sup>20</sup>, որոնք և մանրամասն քննվում են նշված ենթազխում: Երբեմն ասույթում առանձին մտքեր, տեղեկություններ կարող են հաղորդվել անուղղակիորեն՝ ներակայորեն անկախ հեղինակի կամքից, սակայն ավելի հաճախ խոսողը կամ հեղինակը ներիմաստ է ներդնում իր խոսքում՝ հետապնդելով որոշակի նպատակ կամ ելնելով որոշակի հանգամանքներից: Այս ենթազխում առանձնաբար ներկայացվել են այն հանգամանքներն ու միտումները, որոնցով կարող է պայմանավորված լինել կանխամտածված ներիմաստի ներդրումը խոսքում, քննել չկանխամտածված ներիմաստ կրող կառույցները:

Նշենք նաև, որ հասցեատիրոջ դիտանկյունից մոտենալով հարցին՝ կարող են առանձնացվել **հասցեատիրոջ կողմից ընկալված** և **չընկալված** ներիմաստներ: Այսինքն՝ խոսքում խոսողի/հեղինակի ներդրած ներիմաստը հասցեատերը կարող է ընկալել, բայց և կարող է չընկալել: Դա երևում է նրա պատասխանից. եթե նա ներակա հաղորդում պարունակող խոսքին տալիս է ուղղակի պատասխան, նշանակում է՝ չի ընկալել ներակայված հաղորդումը, իսկ եթե տալիս է անուղղակի պատասխան, որը վերաբերում է ոչ թե արտակայորեն ասվածին, այլ ներակայվածին, նշանակում է՝ ընկալել է ներակայված հաղորդումը:

### 3.2. Խոսողի/հեղինակի վերաբերմունքի ներակա արտահայտումը

Հեղինակը կամ խոսողը կարող է ներակայորեն հաղորդել ոչ միայն առարկայական տեղեկություն, այլև իր վերաբերմունքն ինչ-որ բանի նկատմամբ: Ընդունված է ասել, որ ներակա գնահատականը խոսողի ուղղակիորեն չարտահայտված սուբյեկտիվ-գնահատողական հարաբերությունն է խոսքի առարկայի, հասցեատիրոջ կամ ինչ-որ բանի նկատմամբ<sup>21</sup>: Այն ուղղակիորեն չի մտնում նախադասության մեջ, այլ բխեցվում է դրանից՝

<sup>19</sup> Տե՛ս Багдасарян В. Х., նշվ. աշխ., էջ 8-9:

<sup>20</sup> Տե՛ս Никитин М. В., Курс лингвистической семантики: Учебное пособие, էջ 533, Безуглая Л. Р., Терминсистема имплицитности в лингвистике // Вісник Харківського національного університету імені В. Н. Каразіна. Серія: Іноземна філологія. Методика викладання іноземних мов, 2016, Вип. 83, էջ 10, <http://surl.li/seowz> (մուտք՝ 01.11.2023):

<sup>21</sup> Տե՛ս Никитин М. В., Основы лингвистической теории значения, Москва: «Высшая школа», 1988, էջ 156-157:

ելնելով համատեքստից, կանխենթադրույթներից<sup>22</sup>: Այս ենթազվխում ներկայացվում են հեղինակի/խոսողի վերաբերմունքի (դրական կամ բացասական) ներակա արտահայտման միջոցները՝ հաշվի առնելով, որ ներակա գնահատականը կարող է արտահայտվել որոշակի բառային միջոցներով և առանց դրանց՝ ամբողջ նախադասության միջոցով: Օրինակ. «– Հապա՛. մերը չմեռնի Պետրոսի ձիերի,– ասում էր նա,– **նրանց նման ձի որտե՞ղ կա...** Սրանք հրեղեն են, ոչ թե ձիեր...» (ՍԶԵ, էջ 155): Ընդգծված ճարտասանական հարցը ձևով հաստատական է, բայց բովանդակությամբ՝ ժխտական, այն է՝ «նրանց նման ձի ոչ մի տեղ չկա», այսինքն՝ ձիերը եզակի են: Հենց այդ ներիմաստով է արտահայտվում խոսողի՝ ձիերին տված դրական բարձր գնահատականը: Կամ որպես խոսողի կամ հեղինակի վերաբերմունքի ներակա արտահայտման ուշագրավ միջոց առանձնացվել է **այսպես կոչված** կապակցությունը: Այն սովորաբար կիրառվում է պայմանականության իմաստով՝ ինչ-որ բանի պայմանական լինելն արտահայտելու համար, սակայն գնալով ավելի ու ավելի լայն տարածում է գտնում մեկ այլ միտում. **այսպես կոչված**-ը դիտավորյալ կիրառվում է ինչ-որ բանի՝ երևույթի, առարկայի, անձի, իրողության նկատմամբ հեզնանք, արհամարհանք արտահայտելու, խոսքի առարկայի արժեզուրկ, իրեն վերագրվող հատկանիշներից իրականում զուրկ լինելն անուղղակիորեն նշելու համար, օրինակ. «Մեր երկրի, **այսպես կոչված**, ռազմավարական գործընկերն իրականում կանգնած է Ռուսաստանի՝ մեր խոշորագույն ռազմավարական մրցակիցներից մեկի կողքին» (<https://artsakhpress.am/arm/news/137802/>, մուտք՝ 20.07.2023), այսինքն՝ խոսողը **այսպես կոչված գործընկեր** ասելով նկատի ունի, որ տվյալ երկիրն իրականում այնքան էլ իրենց գործընկերը չէ: Իզուր չէ ասվում, որ հեզնանքը ներկայացնում է ճշմարտության պոստոպատի խախտում<sup>23</sup>: Այսօր արդեն **այսպես կոչված** կապակցությունը, կարելի է ասել, դարձել է «ունիվերսալ» միջոց, որ կիրառվում է ցանկացած բանի հետ՝ այն հեզնելու համար, ինչպես՝ «**այսպես կոչված ղեկավար**» (այսինքն՝ ղեկավար անձ, որ զուտ ի պաշտոնն է ղեկավար, բայց իրականում զուրկ է ղեկավարին բնորոշ հատկանիշներից), «**այսպես կոչված դերասան**» (այսինքն՝ մասնագիտությամբ, կոչումով դերասան, որ չունի դերասանական վարպետություն):

---

<sup>22</sup> St' u Пантеева К. В., Понятия эксплицитности и имплицитности в контексте категории оценочности (на материале британского спортивного дискурса) // Вестник Самарского университета. История, педагогика, филология, 2020, № 26 (1), էջ 128:

<sup>23</sup> St' u Ермакова О. П., Ирония и ее роль в жизни языка: учебное пособие, 2-е изд., стереотип.: Флинта, Москва, 2011, էջ 17:

### 3.3. Ներակայման դրսևորման առանձնահատկությունները գործառական ոճերում

Լեզվի գործառական տարբերակներն առանձնացնելիս հիմք են ընդունվում դրանցից յուրաքանչյուրի գործածության բնագավառները և դրանցում կիրառվող լեզվի առանձնահատկությունները: Տարբեր լեզվական երևույթներ տարբեր ոճերում ունեն իրենց դրսևորման յուրահատկությունները, կամ մի ոճում կարող են գործածվել այնպիսի լեզվական միջոցներ, որոնք բացակայում են կամ սակավադեպ են կիրառվում այլ ոճերում: Լեզվի գործառական տարբերակներում դրսևորման տարբեր առանձնահատկություններ և ծավալ ունի նաև ներակայումը: Այս ենթագլխում ընդհանրացված ձևով անդրադարձ է կատարվում գործառական ոճերում ներակայման դրսևորման որոշ բնութագրական գծերի, որոնք պայմանավորված են տարբեր հանգամանքներով, մասնավորապես՝ շարահյուսական, ձևաբանական առանձնահատկություններով և այլն՝ պարզաբանելով ներակայման լայն ընդգրկումը գեղարվեստական խոսքում ու առօրյա-խոսակցական լեզվում և խիստ սահմանափակ դրսևորումները գիտական ու պաշտոնական ոճերում:

Ներակայման ունեցած դերը տարբեր ոճերում պայմանավորված է նաև պատկերավորման-արտահայտչական միջոցների կիրառական հաճախականությամբ, որոնք շատ հաճախ հանդես են գալիս նաև որպես ներիմաստի կրողներ: Մյուս կողմից՝ գործառական ոճերում ներակայման ունեցած տեղն ու դերը պայմանավորված են նաև միևնույն ներակա միջոցի դրսևորման ծավալային տարբերությամբ: Այսպես, օրինակ, բոլոր ոճերում էլ համեմատությունը և փոխաբերությունը գործածվում են, սակայն գիտական ու պաշտոնական ոճերում, պայմանավորված դրանցում խոսքի հստակության, միանշանակության և ճշգրտության պահանջով, այդ միջոցները չունեն ներիմաստի արտահայտման այն լայն ընդգրկումը, ինչ մյուս երեք ոճերում, մասնավորապես՝ ասելիքի քողարկման և ներակա վերաբերմունքի արտահայտման առումով. գիտական ու պաշտոնական ոճերում դրանք գերազանցապես կիրառվում են խոսքի արտահայտչականության համար:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ուսումնասիրելով ներակայումը արդի հայերենի տարբեր մակարդակներում և խոսքում՝ հանգում ենք հետևյալ եզրակացություններիին.

1. Ներակայումը հանդես է գալիս լեզվի տարբեր մակարդակներում յուրաքանչյուրում ունենալով իր ուրույն դրսևորումները: Բառային մակարդակում այն հանդես է գալիս ներքին ձև ունեցող բառերում, մասնակցում բառակազմական տարբեր կառույցների ձևավորմանը,

հնարավորություն տալիս բազմաբաղադրիչ բառերի իմաստն արտահայտելու ավելի սակավաբաղադրիչ բառերով:

2. Ներակայորեն կարող են արտահայտվել բառակազմական կառույցների տարբեր բաղադրիչների՝ ածանցների ու արմատների իմաստները: Ածանցմամբ կազմված բառերում կարող են ներակայվել բառակազմական հիմքի տարբեր ածանցներ՝ ձևավորելով սղատարրային հիմքեր:

3. Բառաբարդմամբ կազմված բառերում ներակայորեն կարող են արտահայտվել անմիջական բաղադրիչների տարբեր ածանցների ու արմատական բաղադրիչների իմաստներ, ընդ որում ներակայումը մեծ մասամբ դրսևորվում է առաջին բաղադրիչում: Առանձին դեպքերում ներակայումը կարող է դրսևորվել երկու բաղադրիչներում միաժամանակ, ինչպես, օրինակ, առաջինում կարող է ներակայորեն արտահայտված լինել որևէ ածանցի, իսկ երկրորդում՝ որևէ արմատական բաղադրիչի իմաստը:

4. Յուրօրինակ ներակայում է առկա հատվածական բարդություններում, որոնցում վերջին հիմքի ածանցը վերաբերում է նաև առաջինին: Որոշ եռարմատ կառույցներում առաջին բաղադրիչին է վերաբերում նաև ածանցին նախորդող արմատի իմաստը:

5. Յուրահատուկ ներակա իմաստ է պարունակում բայական **-ել** վերջավորությունը: Դա ավելի ակնհայտ է դառնում զուգահեռ տարբերակների համեմատության ժամանակ:

6. Ներակայումն առանձնահատուկ դրսևորում ունի հապավումներում, որոնցում յուրաքանչյուր հապավույթ ներակայում է ամբողջական բաղադրիչի իմաստը: Ավելին՝ ներակայման ավելի բարձր աստիճան է դիտվում այն հապավումներում (կրկնահապավումներ կամ զեղչումով հապավումներ), որոնք կազմվել են բաղադրյալ անվան որևէ բաղադրիչի բացթողմամբ:

7. Ներակայումն էլ ավելի մեծ մասնակցություն ունի անվանումների կազմության մեջ, հնարավորություն է տալիս բազմաբաղադրիչ բառակապակցությունն արտահայտելու մեկ բառով՝ շնորհիվ որոշ բաղադրիչների ներակա արտահայտման:

8. Առանձին դեպքերում ներակայումը բարդացնում է բառի իմաստի ճիշտ ընկալումը, երբ ներակայված է որոշակիացնող, կոնկրետացնող որևէ արմատական բաղադրիչի իմաստը:

9. Բառը, իրացվելով խոսքում, կարող է արտահայտել այնպիսի իմաստներ, որոնք չեն մտնում իր հիմնական իմաստային կազմի մեջ և ընկալվում են որպես ներիմաստներ: Դրանք կարող են ծագել, երբ բառը կիրառվում է փոխաբերաբար, փոխանվանաբար, կամ երբ դրական իմաստով բառը գործածվում է հակառակ իմաստով, եզակին՝ հոգնակիի, մասնավորը՝ ընդհանուրի նշանակությամբ և հակառակը: Ներիմաստ պարունակող միավորներ են դարձվածքները, թևավոր խոսքերը, պատկերավոր ասույթները

ու առաձները, որոնցով առանձին դեպքերում կարող է միաժամանակ ներակայորեն արտահայտվել նաև խոսողի կամ հեղինակի վերաբերմունքը:

10. Լեզվի քերականական մակարդակի քննությունը կարող է սպառիչ համարվել, եթե ուսումնասիրված են թե՛ արտակայորեն և թե՛ ներակայորեն արտահայտված միավորները: Յուրաքանչյուր ձևաբանական միավոր ունի իրեն բնորոշ հասկացակարգային նշանակություն, սակայն, իրացվելով խոսքում, կարող է ձեռք բերել բոլորովին այլ նշանակություններ, որոնք հատուկ են այլ միավորների և ընկալվում են ներակայորեն, քանի որ չունեն իրենց ուղղակի, անմիջական ձևային արտահայտությունը: Այլ կերպ ասած՝ մի ձևաբանական միավորը գործածվում է մեկ այլ միավորի նշանակությամբ, որը սովյալ դեպքում դիտվում է որպես ներակա: Ներակայորեն կարող են արտահայտվել ժամանակային, եղանակային, դիմային, թվային, հոլովական նշանակությունները, երբ մի ժամանակը, եղանակը, դեմքը, թիվը, հոլովը գործածվում են համապատասխանաբար մեկ այլ ժամանակի, եղանակի, դեմքի, թվի, հոլովի նշանակությամբ: Առանձին դեպքերում անդեմ ձևերը ներակայում են դիմավոր ձևերի նշանակությունը:

11. Շարահյուսական մակարդակում ներակայումը նախ և առաջ կատարում է երկու կարևոր գործառույթ, այն է՝ հնարավորություն է տալիս բազմանդամ շարահյուսական կառույցը՝ բառակապակցությունը և նախադասությունը ներկայացնելու ավելի սակավաբաղադրիչ կառույցով, որում դրսևորվում է լեզվի տնտեսման օրենքը, և նպաստում է շարահյուսական կառույցի բաղադրիչ տարրերի փոխհարաբերությունների խորքային քննությանն ու ավելի հստակ ըմբռնմանը:

12. Ներակայումն ավելի բազմազան դրսևորումներ ունի նախադասության կառուցվածքում: Դա պայմանավորված է մարդկանց՝ հնարավորինս սեղմ խոսելու, արտահայտվելու ձգտումով: Ներիմաստի դրսևորման միջոց է բացթողումը, որով պայմանավորված՝ ներակայորեն կարող են արտահայտվել և՛ նախադասության տարբեր անդամներ, և՛ բարդ ստորադասական նախադասության գերադաս նախադասությունը:

13. Խոսքային իրադրությամբ և համատեքստով պայմանավորված՝ նախադասությունն ամբողջությամբ կարող է հանդես գալ որպես որոշակի մտքի ներակայիչ՝ արտահայտության պլանում ներկայացնելով մի բան և բովանդակության պլանում թաքցնելով միանգամայն այլ բան, մասնավորապես ձևով հաստատական նախադասությունները երբեմն արտահայտում են ժխտում, ժխտական նախադասությունները՝ հաստատում:

14. Ներակա ժխտումը և ներակա հաստատումը կարող են արտահայտվել հարցական, հատկապես հոետորական-հարցական և բացականչական նախադասություններով, պայմանի պարագա երկրորդական նախադասություններով գերադաս նախադասության գեղջման դեպքում, և դրանում մեծ դեր ունեն համապատասխան հնչերանգն ու համատեքստը՝ առանց որոնց նշված



կառույցները կրնակավեն ուղղակի իմաստով: Ներակա հաստատում արտահայտող յուրօրինակ միջոց է կրկնակի ժխտումը:

15. Խոսքային իրադրությամբ պայմանավորված՝ հարցական նախադասությունները երբեմն ներակայորեն արտահայտում են հրաման՝ հանդես գալով որպես յուրօրինակ մեղմասություններ:

16. Ներիմաստ պարունակող յուրօրինակ տարրեր են կախման կետերն ու **և այլն** արտահայտությունը, որոնցով թվարկման դեպքում ենթադրվում են հավասարաբաժեք անդամներ: Երբեմն էլ կախման կետերով նշվում է որոշակի մտքի ներակայումը, որը խոսողը կամ հեղինակը ինչ-ինչ պատճառներով ուղղակիորեն չի արտահայտում՝ անավարտ թողնելով իր խոսքը:

17. Արևելահայերենի և արևմտահայերենի բառային և քերականական մակարդակներում կան ներակայման դրսևորման որոշակի տարբերություններ. արևմտահայերենում այն ավելի լայն ընդգրկում ունի: Դա առավել նկատելի է բառակազմության մեջ: Այսպես՝ շատ դեպքերում արևելահայերենում բաղադրիչների արտակայությամբ կազմված բառերի դիմաց արևմտահայերենում առկա են որոշ բաղադրիչների ներակայությամբ կազմված տարբերակներ, կամ ներակայումը հանդես է գալիս երկու ճյուղերի համապատասխան բառային տարբերակներում, սակայն արևմտահայերենում այն բնութագրվում է դրսևորման ավելի բարձր աստիճանով: Դիտվում է նաև հակառակ երևույթը, որը, սակայն, ավելի քիչ դեպքեր է ընդգրկում: Արևմտահայերենի քերականական մակարդակում ներակայման ավելի մեծ մասնակցությունը պայմանավորված է մի կողմից՝ նրանով, որ հոլովական իմաստների ներակայումն ավելի լայն ընդգրկում ունի, մյուս կողմից՝ նրանով, որ արևելահայերենի որոշ հոլովակապային կառույցների փոխարեն արևմտահայերենում շարահյուսական կիրառության մեջ հանդես են գալիս միայն հոլովաձևերը, իսկ կապերի իմաստներն ընկալվում են ներակայորեն:

18. Շատ հաճախ խոսքում պարունակվող տեղեկույթը շատ ավելի լայն է, քան արտահայտված է տվյալ կառույցում, ավելին՝ հենց այդ արտակայորեն չարտահայտվածը՝ ներիմաստն է խոսքի բուն բովանդակությունը: Երբեմն ներիմաստը ծագում է ինքնիրեն՝ խոսողի կամ հեղինակի կամքից անկախ, բայց շատ հաճախ խոսողը կամ հեղինակը ինքն է կանխամտածված ներիմաստ ներդնում իր խոսքում՝ ելնելով տարբեր հանգամանքներից և հետապնդելով տարբեր նպատակներ:

19. Չկանխամտածված ներիմաստի դեպքում խոսողը/հեղինակը, որոշակի մտադրություն չունենալով, հատուկ ուշադրություն չի դարձնում լեզվական միջոցների ընտրությանը, հատ-հատ չի ընտրում լեզվական միավորները, այլ խոսքը կառուցում է ինքնաբուխ կերպով, և դա սովորաբար պայմանավորված է լինում նրանով, որ առաջնային է համարվում զուտ տեղեկատվության հաղորդումը, այսինքն՝ ինչ-որ բան արագ, առանց այլևայլության իմանալը կամ հաղորդելը: Ուստի շատ հաճախ չկանխամտածված ներիմաստն

արտահայտվում է, օրինակ, անավարտ, «անսկիզբ», անվանական անդեմ նախադասություններով, որոնք նպաստում են արագ հաղորդակցությանը: Մինչդեռ կանխամտածված ներիմաստ հաղորդելու համար նա ընտրում է հատուկ միջոցներ, քողարկում բուն միտքը և խոսքը կառուցում այնպես, որ բուն ասելիքն ընկալվի որպես տողատակ:

20. Խոսքում թաքնված ներակա տեղեկույթի վերհանումը հասցեատիրոջից պահանջում է որոշակի ֆոնային գիտելիքներ և ջանքերի գործադրում, որով պայմանավորված՝ ներակա տեղեկույթը կարող է ընկալվել կամ չընկալվել հասցեատիրոջ կողմից:

21. Հայտնի է, որ պատկերավորման-արտահայտչական միջոցները խոսքը ազդեցիկ, տպավորիչ դարձնող, հարստացնող ոճական հնարքներ են: Սակայն շատ պատկերավորման-արտահայտչական միջոցներ կատարում են մեկ այլ ուշագրավ գործառույթ ևս, այն է՝ հնարավորություն են տալիս տարբեր հանգամանքներից ելնելով և տարբեր նպատակներով տեղեկույթը հաղորդելու անուղղակիորեն կամ քողարկելու այն, այսինքն՝ հանդես են գալիս որպես ներիմաստի հաղորդման միջոցներ: Երբեմն դրանցով ներակայորեն հաղորդվում է նաև խոսողի/հեղինակի վերաբերմունքը կամ գնահատականը: Ավելին՝ ներակայման ավելի բարձր աստիճան դիտվում է այն դեպքերում, երբ ներակայորեն են արտահայտվում թե՛ տեղեկույթը, թե՛ խոսողի/հեղինակի վերաբերմունքը:

22. Խոսողը/հեղինակը կարող է ինչ-որ բանի մասին արտահայտվել չեզոք ոճով, բայց և կարող է արտահայտել իր վերաբերմունքը դրա նկատմամբ: Երբեմն այն փոխանցվում է ներակայորեն:

23. Հեղինակի/խոսողի ներակա վերաբերմունքը կարող է արտահայտվել որոշակի բառային միջոցներով կամ առանց դրանց՝ ամբողջ նախադասության միջոցով: Շատ ավելի բազմազան են ներակա բացասական վերաբերմունքի կամ գնահատականի դրսևորման միջոցները (հեզնական և փոխաբերական կիրառությամբ բառեր, կոպտասություններ, հասարակաբանություններ և այլն):

24. Ներակա գնահատականի արտահայտման մեջ ընդգծված դեր ունի հնչերանգը, որն ակնարկում է ձևականորեն արտահայտվածի և թաքնված իմաստի անհամապատասխանության մասին: Առանձին դեպքերում այն նպաստում է բառում կամ կառույցում նոր նշանակության առաջացմանը և դառնում խոսողի/հեղինակի վերաբերմունքի դրսևորման յուրօրինակ միջոց:

25. Ներակայումը լեզվի գործառական տարբերակներում հանդես է գալիս տարբեր չափերով ու միջոցներով, դրսևորման տարբեր յուրահատկություններով: Դա պայմանավորված է դրանց գործառույթներով, լեզվական առանձնահատկություններով ու տարբեր հանգամանքներով, մասնավորապես՝ իրադրականությամբ: Այն առավելագույնս հանդես է գալիս գեղարվեստական խոսքում ու առօրյա-խոսակցական լեզվում և սահմանափակ դրսևորումներ ունի գիտական ու պաշտոնական ոճերում, իսկ հրապարակախոսական ոճը

այդ առումով ևս միջին դիրք է գրավում ոճերի համակարգում, քանի որ թեև լեզվով ու քերականական կառույցներով մոտ է գիտական ու պաշտոնական ոճերին, բայց, մյուս կողմից, պարունակում է ներակա իմաստ արտահայտող տարբեր միջոցներ:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՇԵՂԵՆԱԿԻ ՇԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ**

1. **Կեսոյան Մ.**, Ներակայման դրսևորումները արդի հայերենի շարահյուսական մակարդակում. բառակապակցություն և նախադասություն // Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, Երևան, 2020, թիվ 1 (31), էջ 74-84:

2. **Կեսոյան Մ.**, Ներակայումը արդի հայերենի բառային մակարդակում // Հայագիտական հանդես, Երևան, 2021, թիվ 2 (51), էջ 37-49:

3. **Կեսոյան Մ.**, Ներակայումը արդի հայերենի ձևաբանական մակարդակում // Գիտական Արցախ, Երևան, 2021, թիվ 2 (9), էջ 163-171:

4. **Կեսոյան Մ.**, Պատկերավորման-արտահայտչական միջոցները որպես ներիմաստի արտահայտման ոճական հնարանքներ: Քննություն նոր լույսի ներքո // ՎԷՄ, Երևան, 2022, թիվ 4 (80), էջ 173-190:

5. **Կեսոյան Մ.**, Խոսողի/հեղինակի բացասական-հեգնական վերաբերմունքի ներակա արտահայտումը արդի հայերենում // Գիտական Արցախ, Երևան, 2023, թիվ 3 (18), էջ 109-120:

6. **Կեսոյան Մ.**, Կանխամտածված ներիմաստի արտահայտումն արդի հայերենում // Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, Երևան, 2024, թիվ 2 (44), էջ 128-140:

## **КЕСОЯН МИРАНУШ ЭДУАРДОВНА**

### **ИМПЛИЦИТНОСТЬ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ**

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.01 «Армянский язык»

Защита состоится 30 октября 2024 г. в 15<sup>00</sup> часов, на заседании специализированного совета КВОН РА 019 по Лингвистике, действующего при Институте языка имени Р. Ачаряна НАН РА  
(адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича/15)

### **РЕЗЮМЕ**

**Актуальность темы.** Имплицитность, несмотря на занимаемое в языке важное место, в армянской лингвистике мало изучена. Ранее детально были проанализированы условные высказывания как разновидность имPLICITНЫХ

высказываний, их прагматический смысл, были представлены языковые корреляции имплицитности, проведено сопоставительное исследование средств выражения условности, с одной стороны, в оригинальном тексте и в его межъязыковых переводах, с другой стороны, в оригинальном тексте и в его внутриязыковых переводах. Одним словом, был проведен логический глубокий анализ высказывания «если ... то». В свою очередь В. Багдасарян рассмотрел проблему имплицитности в языке с логико-методологической точки зрения, представил некоторые способы проявления имплицитности и рассмотрел ряд логических вопросов, связанных с имплицитностью.

Было проведено теоретическое сопоставительное исследование двух полюсов языкового выражения – имплицитности и эксплицитности, обусловленных особенностями предложения и текста. Имплицитность в широком смысле была рассмотрена С. Абрамяном, который выделил некоторые проявления имплицитности на разных уровнях языка, рассмотрев это явление и в словообразовании и, таким образом, обозначив важность последовательного и глубокого изучения вопроса.

В армянском языкознании есть и другие исследования имплицитного смысла, которые, однако, были проведены на материале текстов английского и французского языков.

**Актуальность** данной работы обусловлена необходимостью определения способов практического применения имплицитности на разных уровнях современного армянского языка и в речи, необходимостью исследования особенностей отражения имплицитности на каждом уровне и анализа средств косвенного выражения мысли, передачи предметной и оценочной информации.

**Цель и задачи исследования.** Цель исследования – изучить имплицитность на всех уровнях современного армянского языка и в речи, выяснить, какие проявления и какие особенности это явление имеет на каждом уровне языка и в речи.

В связи с целью исследования возникают следующие проблемы:

1. рассмотреть словообразовательные структуры, в которых есть имплицитные элементы, и выяснить, какие компоненты могут быть выражены имплицитно в различных структурах;
2. проанализировать информацию, переданную имплицитно через лексические единицы;
3. выявить значения морфологических категорий, которые воспринимаются в данном применении имплицитно;
4. изучить функции и роль имплицитности в составе различных словосочетаний и в структуре предложения;
5. рассмотреть типы имплицитного смысла, выявить причины возникновения непреднамеренной имплицитного смысла, а также обстоятельства и тенденции, которые обуславливают преднамеренное введение имплицитного смысла в речь;
6. изучить средства имплицитного выражения отношения говорящего или автора;
7. в общих чертах рассмотреть объем имплицитности в различных функциональных стилях.

**Методология работы.** Исследование проводилось с использованием комбинации нескольких методов. Были применены аналитические, сопоставительные и описательные методы. Теоретические положения были подкреплены примерами, взятыми из словарей, повседневной речи, художественной литературы, прессы, в редких случаях также из текстов научного и официального стилей.

**Научная новизна диссертации.** В армянской научной действительности изучению вопроса имплицитности было посвящено мало исследований. Можно сказать, что данная работа является первой попыткой рассмотреть имплицитность в современном армянском языке в широком ее смысле, исследуя это явление как на разных уровнях языка, так и в речи.

С другой стороны, в диссертационном исследовании различные языковые структуры и единицы рассматриваются с новой точки зрения, в частности, в новом свете, а именно как средства выражения имплицитного смысла, анализируются такие ранее детально изученные единицы, как образно-выразительные средства, неологизмы, просторечия и т.д.

**Практическое значение диссертации.** Проведенное исследование может сыграть важную роль в правильном толковании языковых значений, мотивируя рассматривать значения и тенденции, скрытые под внешней формой. Результаты диссертационного исследования могут внести весомый вклад в дальнейшее изучение вопроса.

**Структура диссертации.** Работа состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и списка сокращений.

Во **введении** рассмотрено понятие «имплицитность», проанализированы разграничения между понятием «имплицитность» и связанными с ним понятиями (подтекст, presupпозиция, импликатура).

В **первой главе** («Имплицитность на лексическом уровне») рассмотрена имплицитность в словообразовании и семантике.

Во **второй главе** («Имплицитность на грамматическом уровне») рассмотрены проявления имплицитности на морфологическом и синтаксическом уровнях.

В **третьей главе** («Имплицитность на коммуникативно-функциональном уровне») рассмотрены типы имплицитного смысла в соответствии с различными критериями, изучены преднамеренный и непреднамеренный типы имплицитности, средства имплицитного выражения отношения автора/говорящего, а также в общих чертах проанализированы особенности проявления имплицитности в функциональных стилях.

В **заключении** обобщены основные результаты научного исследования.

Общий объем диссертации составляет 143 страницы.

## MIRANUSH EDUARD KESOYAN

### IMPLICITNESS IN THE MODERN ARMENIAN

Thesis for PhD degree in Philology, speciality 10.02.01, "Armenian Language"  
The defense will be held on 30 October, 2024 at 15<sup>00</sup>, at the session of Specialized Council on Linguistics of 019 HESC RA in the Institute of Language after Hr. Acharian NAS RA (address: Yerevan, 0015, Grigor Lusavorich St. 15)

#### SUMMARY

**The relevance of the theme:** Despite its significant role in the language, implicitness has not been extensively studied in the Armenian linguistics. In the present research, conventional sayings were examined in detail as a variety of a saying with implicit meaning; their functional meanings and the linguistic correlates of implicitness have been presented. A comparative analysis of the means of conventional meaning was conducted between the original text and interlingual translations on the one hand and between the original text and intralingual translations on the other hand. In other words, a deep logical examination of the saying "if ... then" was performed. V. Baghdasaryan has also examined the problem of implicitness in language from a logical-methodological point of view, has presented some means of manifestation of implicitness, and has addressed a number of logical issues related to implicitness.

Theoretically, a comparative examination of the two poles of linguistic expression—implicitness and explicitness—was performed due to the features of the sentence and the text. S. Abrahamyan has examined implicitness in a broader sense by distinguishing some manifestations of implicitness at different levels of the language, by examining it also in word formation and thus outlining the importance of a consistent and deep study of the issue.

There are other studies of implied meaning in Armenian linguistics as well, which, however, were made on the basis of the English and the French materials.

The relevance of this research is due the necessity to identify the implied meaning at different levels and speech of the modern Armenian language, the peculiarities of its manifestation at each level and, due to different circumstances and tendencies, the need to indirectly formulate a thought, indirectly convey objective and evaluative information.

**The aim and the problems of the research:** Our goal is to study the implicitness at all levels and speech of modern Armenian and to find out what manifestations and peculiarities it has in each of them.

Due to the purpose of the study, the following problems arise:

1. to consider the lexical structures in which the implicitness takes part, and find out the meanings of the components that can be implied in different structures,
2. to examine the implicit information conveyed by word units,
3. to find out the meanings of those morphological orders that are understood in the given usage in an implicit way,
4. to study the functions and role of implicitness in the composition of various phrases and in the structure of the sentence,

5. to consider the types of the implicitness, to find out the causes of occurrence of the unpremeditated implied meaning, and those circumstances and tendencies that lead to the deliberate insertion of the implied meaning into speech,
6. to examine the means of the implicit expression of the speaker's or author's attitude,
7. to address the inclusion of implicitness in different functional styles in general.

**The methodology of the work:** The study has been conducted by juxtaposing several methods. Analytical, comparative and descriptive methods were used. The theoretical propositions were substantiated with examples taken from dictionaries, everyday speech, fiction, the press, and in rare cases, also from texts of scientific and official styles.

**The scientific novelty of the thesis:** There were only partial and very few references to the implicitness in the Armenian reality. It can be said that this work is the first attempt to consider implicitness in the modern Armenian in a wide scope, examining it both at different levels of the language and in speech.

On the other hand, in the work, various linguistic structures and units were studied from a new point of view, in particular, such units, which have been extensively studied many times, such as figurative and expressive means, neologisms, sociologies, etc., were examined in a new light, that is, as means of expression of implied meaning.

**The practical significance of the thesis:** This study can have a guiding role in the correct understanding of linguistic meanings, prompting to take into account the meanings and tendencies hidden under the external structure. It may contribute to further studies of the issue.

**The structure of the thesis:** The work consists of an introduction, three chapters, conclusions, a list of used literature and abbreviations.

**In the introduction** the concept of implicitness and referred to the distinction of implicitness and related concepts (subtext, presuppositions, implicature) have been examined.

**In the first chapter** ("Implicitness at the word level") implicitness in word formation and semantics has been examined.

**In the second chapter** ("Implicitness at the grammatical level") the manifestations of implicitness at the morphological and syntactic levels have been studied.

**In the third chapter** ("Implicitness at the communicative-functional level") the types of implied meaning have been presented according to different criteria and examined intentional and unintentional implied meanings, the means of implicit expression of the author's/speaker's attitude. In general, we considered the features of the manifestation of implicitness in functional styles.

The main outcomes of the scientific study are summarized **in the Conclusions**.

The total volume of the thesis is 143 pages.